գուրը, որի բութ ծայրին խփում էին ծանր մուրճով, հանքաքարը դուրս էին կրում ֆքօցնէրավ, *իսկ ջուրը՝* տիկէրավ: *Հանքը գրաստներով էին տեղափոխում հալեցման վայրը։ Այդ հանքահորերը լուսավորվում էին սև նավթով լցված ձեռքի ճրագներով։ Միայն դարավերջին հանքահանման և հալեցման մեջ սկսեցին մտցնել որոշ նորություններ։ Այժմ սովետական իշխանության օրով այստեղի ամբողջ սարքավորումը և հանքահանման ու հանքաձուլման աշխատանքը կատարվում է գիտության վերջին խոսքով, միանգամայն կատարելագործված միջոցներով։*

Զանգեզուրը միշտ ունեցել է ձուլված և զտված պղնձի մեծ պաշար և զարմանալի է, որ չի կրթել այնպիսի պղնձագործ վարպետներ, որոնք իրենց արհեստի բարձրությամբ հռչակ ստացած լինեին շրջակայքում, նույնիսկ տեղական պահանջները բավարարել են դրսից եկող լախչեցի՝ լագիշեցի՝ լեռնցի պղնձագործները, որոնք ոչ միայն նոր պղնձե ամաններ մատակարարողներ են եղել, այլև վնասված ամանների նորոգողներ ու կլեկչիներ։

Զանգեզուրցի ընտանիքում, ինչպես և Փոքր Կովկասի հյուսիսային լանջերի գավառներում, ամանների մեջ պղնձեղենը ներկայացված է հարուստ ձևերով[133], *սակայն ժողովրդական լայն գործածության մեջ եղած ամանները —ջրի մեծ և փոքր* գüգüմնէրը, կճօճնէրը, թավանէրը, աբիգäրդաննէրը, սաթիլնէրը, մէժմäճինէրը, բոխչաքնէրը, կթէճնէրը, ջամինէրը, *և այլն՝ պարզ գործեր են, առանց փորագիր կամ գունավոր զարդարման։ Ճիշտ է, շատ հին և հարուստ ընտանիքներում պատահում էին վերին աստիճանի նուրբ նախշազարդ անոթներ, որոնք թույլ են տալիս ենթադրելու, որ մի ժամանակ Զանգեզուրում պղնձագործության արհեստը եղել է ավելի բարձր կատարելության աստիճանի վրա, սակայն ենթադրությունը չի հիմնավորվում ուրիշ կից արհեստների մեջ ցուցաբերվող գեղարվեստական ճաշակով։ Թվում է, թե ավելի ճիշտ կլինի այն եզրակացությունը, որ այդ նախշուն իրերի մեծագույն մասը դրսից մտած իրեր են, Շուշու արհեստանոցներից կամ ավելի հավանական է՝ Թավրիզից բերվող։ Թավրիզից էին գալիս նույնպես տեղում մանավանդ կանանց զգեստի համար գործածվող կտորեղենների նուրբ ու թանկարժեք տեսակները։*

ՈՍԿԵՐՉՈՒԹՅՈՒՆ

Ոսկերչությունն էլ Զանգեզուրում սահմանափակվում էր պարզ աշխատանքներով։ Ոսկերիչները նստած էին գլխավորապես Գորիսում և մենք տեղեկություն չունենք, թե ո՞րդյոք նրանց արհեստի ներկայացուցիչները կային գավառի այլ մասերում, երբ դեռ այստեղ չէր հիմնվել Գորիս քաղաքը և բնակավայրերը միայն գյուղեր և ձմեռանոցներ էին։ Այդ ժամանակաշրջանում տեղական բնակիչները, թե՛ հայ և թե՛ թուրք, մանավանդ կանանց գործածած մատանիները, կնիքները, գլխի չանգäլնէրը, կöտինէրը, կäվաքնէրը, *թասերը, ինչպես և եկեղեցական սպասարկության արծաթեղեն և ոսկեղեն իրերը, բերվում էին Շուշուց, որտեղ ոսկերչությունը՝* զարգäրությունը *կարող էր հպարտանալ այնպիսի վարպետներով, ինչպիսինն են ուստա Բաղամը (Գրիգոր Բաղամյանը), որի շինած հայկական ճաշակով զարդարված* մինա *կոչվող էմալե գործերը հռչակված էին Անդրկովկասում, մասնավորապես Տփղիսում։*

Գորիսում մինչև այսօր էլ պահպանվել են ոսկերիչների արհեստանոցները, որոնք սպասարկում են առավելապես ադրբեջանցի կանանց պահանջները։

---

[133] *Տե՛ս «Ամաններ» գլուխը։*